**Նոտարական ակտի կոդ:** 557-20260407-117-9972237
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 3ZGYDG

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԵՏԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆՎԵՑ ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՅՈԹԻՆ

ՀՀ քաղաքացի **ՆԵԼՍՈՆ ՄԱԿԻՉԻ ՈՍԿԱՆՅԱՆԸ**, ծնված՝ 04/08/1955թ-ին, ՀԾՀ՝ 1408550139, անձնագիր՝ AP0648047, տրված՝ 001-ի կողմից, 25/01/2017թ-ին, բնակության հասցե՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ՅՈՒՅԱՆ Փ., 83 Տ հասցեում, այսուհետ՝ «ԿՈՂՄ-1» մի կողմից,
ԵՎ
**Հայաստանի Հանրապետությունն, ի դեմս՝«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմնի,** հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 130, գրանցման համար՝ 286.184.1289951, ՀՎՀՀ՝ 02882913, ի դեմս գործադիր մարմնի ղեկավարի՝ ԱՐԱ ԽՈՐԵՆԻ ՖԻԴԱՆՅԱՆԻ, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ ՀՀ քաղաքացի ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԸ, ծնված՝ 27/07/1987, ՀԾՀ՝ 3707870642, նույնականացման քարտ՝ 005833934, տրված՝ 011-ի կողմից 28/04/2017թ-ին հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՐԲ., 8Ա ՏՈՒՆ հասցեում, ՀՀ Ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից **31.01.2024թ.-ին տրված թիվ 27/88** լիազորագրի հիման վրա, (Վարձակալության պայմանագրում՝ կնքված՝ 01.03.2019թ.-ին ՀՀ ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար Լիլիթ Ասատուրի Մուրադյանի կողմից վավերացված, գրանցամատյան՝ 549, «ՎԱՐՁԱԿԱԼ»՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանություն), այսուհետ՝ «ԿՈՂՄ-2» մյուս կողմից,
ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

**1. Կողմերը փոխհամաձայնությամբ** որոշեցին փոփոխել միմյանց միջև 01.03.2019թ. ՀՀ ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար՝ Լիլիթ Ասատուրի Մուրադյանի կողմից վավերացված, գրանցամատյան՝ 549, Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:
**2. Կողմերի համաձայնությամբ** վերոհիշյալ պայմանագրի Վարձակալի վավերապայմաններում Հայաստանի Հանրապետության Ոստիկանության տվյալները շարադրվում է հետևյալ կերպ՝ «Հայաստանի Հանրապետությունն, ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության
ՀՀ Ֆինանսների Նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913»:
**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի համաձայն սույն համաձայնագրով սահմանված դրույթները գործում է 01.01.2026թ./երկու հազար քսանվեց թվականի հունվարի մեկից/:**
3. Սույն համաձայնագրի կողմերի չնախատեսված այլ պարտավորությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Վերը նշված Վարձակալության պայմանագրի և/կամ նրան կից Համաձայնագրերի մյուս կետերը մնում են անփոփոխ:
5. Համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարվում ԿՈՂՄ-2-ի կողմից:
6. Սույն համաձայնագիրը կողմերի ցանկությամբ կնքված է հայերեն լեզվով, 3 /երեք/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Բնօրինակ է համարվում նոտարի մոտ պահվող օրինակը:
7. Համաձայանագրի բովանդակությունը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց կողմերին: Համաձայանագրի բովանդակությունը բավարարում է նրանց պահանջները:
8. Մենք «Կողմերս» լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող պայմանագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առնչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ծանոթ են: Պայմանագրի բոլոր դրույթները բխում են մեր «Կողմերիս» իրական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտմամբ:
«ԿՈՂՄ-1»
**ՆԵԼՍՈՆ ՄԱԿԻՉԻ ՈՍԿԱՆՅԱՆԸ**,
բնակության հասցե՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ՅՈՒՅԱՆ Փ., 83 Տ
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470011722760050

«ԿՈՂՄ-2»
**Հայաստանի Հանրապետությունն, ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության** ի/ա ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ
ՀՀ ֆինանսների Նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
-------------------------------------------------------------------------------------------

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆՎԵՑ ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՅՈԹԻՆ
Սույն համաձայնագիրը վավերացվել է, իմ՝ «ԵՐԵՎԱՆ» նոտարական տարածքի նոտար՝ ԼԻՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՍ կողմից: Սույն համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված է:

Գրանցված է գրանցամատյանում 1110 ------------------------- ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20% ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Լինա Գագիկի Հովսեփյան